



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

18771

891.99

4-18

1878

Ն Ո Ւ Է Ր

Ա Ռ Ո Ւ Ս Ա Ն Ո Ղ Ս

Գ. ՎԱՀՈՒՆԻԷՆ

2003



Կ. ՊՕԼԻՍ

Տ Պ Ա Պ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

891.99  
4.18

1878

23049

36 99  
L-18  
W

### Ը Ն Ծ Ա Յ Ա Գ Ի Ր

Ամանորի առթիւ Ձեզ կ'ընծայեմ տոյն մատենիկս , ո'վ պատանի ժողովուրդ , Ձեզ' որ ծնողէք ապագայի . այդ անշուք գրասեղաններու վերայ նստած կը թողուք ձկտել ձեր միտքն դէպ բարւոյն և գեղեցկին աշխարհ , բանալ Ձեր փափուկ սիրտն ազնիւ զգացմանց առաջ . բացէ՛ք և սմա համար :

Նուէրն , զոր կը տամ Ձեզ չ'է ինչ . զի նա մի այրած սրտի տկար հոծիւնքն և եթ կը պարունակէ , այլ , հաւատացէ՛ք , Ձեր քաջալերութիւնն թե պիտի տայ մը-աացս յառաջ վարել իմ դողդոջ քայլերն դէպ այս դըժուարին ասպարէզ , ուր գուցէ իմ ովսանն ազգի ծառայած լինելու մեծ և բարձր պատիւն ընդունելու արժանիքն ունենամ :

Կը յուսամ ի ձէնջ քաջալերել այն սիրտ , որ զՁեզ կարի' կը սիրէ և Ձեր յառաջդիմութեան վերայ կը թրթռայ յար :

Ձեր եղբայրն  
Գ. ՎԱՀՈՒՆԻ



780  
39



## Ամենասիրելի Հայր իմ

Մի այնպիսի տարիքի մէջ, ուր հոգին առաջին անգամ յուզուելու պէտքն կ'զգայ, ուր հեշտ է նմա թռիչ սաւառնել միշտ իտէականի բարձանց մէջ, անդ սլաքել, խոցել որ ինչ չար է. անդ մագնիսել, ընդ գրկել որ ինչ բարի. այո՛, մարդկային կենաց այդ պայծառ առաւօտին մէջ քաղցր է ինձ ծունր կրկնել սրտով քո հայրական ծնգաց առաջ, անդ գործովոյս արտասուք սրսկելու երկիւղած:

Յորչափ յառաջ վարեմ քայլերս դէպ կեանքի պողոտային վերայ, ց'որչափ սահին վայրկեաններ, ընդհարելով ճակտիս անցելոյն անտակ անդունդ. ց'որչափ վերաբարձ ընեն կենացս հաւաքական փոքրամասեր մի խորհրդաւոր շարքով, և յիշատակաց նոր փայլ գծելով մտքիս հորիզոնին վերայ, մի նոր լոյս կը նշմարեմ, նոր ցնցում կ'զգամ և հոգիս նոր աւիւնով կ'ոգեւորի:

Այն օր, ուր ոչընչութեան խաւարէն ի լոյս բերեր դու զիս, կեանք տուիր ինձ. չէի այլ ինչ, բայց եթէ մի շարժուն կաւ, գործովական սիրոյ առարկայ, գաղտնիքով ծրարուած թագուն ապագայ. դու յայնժամ, ո՛ գիտէ, իմ տեսոյն հրապուրանքէ գինովցած, կը ձկտէիր, կը սուզէիր իմ ապառնի կեանքի խոր, անդ նըշմարել քո իղձ բոլոր իրացած:

Հասաւօր, ուր դու վերջ տուիր այս երազոց, զայնս իրականութեան փոխելու. զի այս քո պարտն էր. բռնեցիր իմ ձեռքէն, տարիր դպրոց յանձնեցիր, ինչ կ'ասեմ, վերակազմութեան այն վեհ ձուլարան. անդ մի խոթողէմ մարդ կը հսկէր. վարժապետ էր այն. չէր ժրպտէր նա ինձ, կը խոթուէր, երբ իմ մանկական խաղ և շարժում շարունակէի, և սարսափ կ'ըզգայի, ո՛վ տղայութեանս:

Յայնժամ դու ինձ ասացիր գողտրիկ, «ղաւակս այք, բէ ուսիր». և դուցէ լուեկայն խորհրդածէի թէ այդ տառերու առաջին հնչիւնն միտքս կաշկանդող տգիտութեան սև շղթայն պիտի շարժէր. վարագուրի տակ ծածկուած ապագայիս զարթուցիչ գանգակն պիտի հնչէր. թէ փրկագործութեան ճանապարհի յուսաւէտ նշոյլն պիտի լինէր, կեանքիս օրերն պիտի յեղաշրջէր:

Անցան տարիներ, մարդկային կեանքի ամենէն խաղաղ օրեր, այլ ես ուսայ այք, բէ ն, ուսայ ուսումներ, ոյք իմ միտք պիտի բեղմաւորէին, իմ սիրտ և հոգի ազնուացնէին իմ կատարելութիւն երաշխաւորէին. կ'զգամ թէ յոյժ քաղցր է ուսման այն կաթ, զոր կը ջամբեն դաստիարակն և վարժապետ. կ'զգամ թէ լուսոյ ջահեր են այն ուսմունք, ոյք կեանքի փշուտ և ժեռուտ ճանապարհն կը հարթեն, առանց որոց իմ մատաղ ոտքեր պիտի արիւնէին. կզգամ թէ հանուր մարդկութիւնն արդէն յարատև շարժման մէջ, պարտ էր երթալ հասնել այն գագաթնակէտ, ուր մեն մի անհատի և ազգի ապագայն կայ ծրարուած, ի մի բան կ'զգամ թէ պարտ է

յառաջել, անընդհատ յառաջել, մինչ կեանքի վերջակէտն:

Սակայն, հայր իմ, քեզ կը պարտիմ այս ըզգացում, այս լոյս, այս շարժումն, այս յառաջդիմութիւն, այս տողեր. զի դու բաւ չը համարեցիր միայն ինձ կեանք տալ, այլ ուսման աւազանին մէջ ևս հաճեցար մկրտել զիս և կրկին մարդ վերածնել. օրհնեալ լինին յաւիտեան քո ջանք և վաստակ:

Հայր իմ, չունիմ վարձ, փոխանքս հայրական այս մեծ գործի, բայց միայն խոստումն իմ ապագայ յառաջդիմութեան. պիտի ջանամ, այո՛, յառաջիկայ տարւոյ մէջ առաւել մեծ արդիւնք ցոյց տալու. պիտի ջանամ նմանօր լինեղաստիարակացս և վարժապետաց. պիտի ջալնամ հուսկ ուրեմն մի ՄԱՐԴ լինել, յորժամ պիտի պսակուինք իղձերն լիովին:

Ամանորի առթիւ իմ որդեական սիրոյս ըզգացման բոլոր ոյժովն համբուրելովք ձեռքերն:

Մնամք սիրելի որդին

\* \* \*

1 Յուն. 79

Սիրելի որդեակս

Հրճուանքով լի է սիրտս սոյն պահու, ուր կը պատրաստուիմ պատասխանել քո նամակի: Երիցս կարգացի քո նամակ, զոր այնքան

եռանդով էիր գրած . տեսայ անդ չնորհ և հեզութիւն , գեղ , և հրապոյր , ոյք քո սրտի նկարըն կը ներկայէին : Եւ թողի զինքս մի պահ վազել հայրական զգացմանց ծայրն , ուստի նկատել զքեզ հոգեպիշ , քեզ , ոյր վերայ կեդրոնացած են իմ ապագայ բոլոր յոյսերն :

Այն երախտագիտական դրուատիք զոր դու ինձ կ'ընծայես քո գողարիկ բարբառով , կարի մեծ են . զի ես ինչ ըրի քեզ . — իմ պարտն կատարեցի . ես քեզ միայն հաց և պատսպարան տուի — , տա՛ր ձօնել զայնս քո դաստիարակին ճակտի , որ տիւ և դիշեր սիրտ մաշեց քո միտք լուսաւորելու , քո այդ հոգին աշնուացնելու . քեզ « կրկին—մարդ վերածնելու » , իսկ ես խրատ ասեմ քեզ , և դու ինձ ուշ դի՛ր հեզութեամբ :

Այս մոլորակի վերայ մարդեր կը ծնին և պարտքեր ունին . պարտ առ անձն , պարտ առ ծնողս և առ հայրենիս . զի նա , որ չը գիտէ զեկավարել անձն , չըյարդեր այն ձեռն , որ իւրեան կեանք և սնունդ տուաւ , նա , որ չը սիրեր իւր ազգ և հայրենիք , յիմար է , ապերախտ է , անտարբեր է :

Սրարչի վրձինն նկարներով զարդարած է բնութիւնն . ուր ամեն հաճոյք պատրաստ կան մարդուն : Ծագիկ , դալար նմա համար են . դաշտ , անապատ նմա համար են . ծով , ովկիան նմա համար են . ոսկի , ադամանդ նմա համար են . բարիք առաքինութիւն նմա համար են . ազգ և հայրենիք նմա համար . որ կարաց վարել զաշխարհ , նմա են գեղ և հրապոյր , փառք և հարստութիւն , պատիւ և անմահութիւն :

Այդ վարումի հզօր դասագիրք դպրոցն է , ուր դու , խաղաղ , այդ գրասեղաններու վերայ նստած , կը սուղիս քո ապագայի խոր , անդ կանուխէն քո երջանկութիւն շօշաբելու : Քանի մե՛ծ է դպրոցն , բանավար սեռին կենաց յեղաշրջումի այդ բոց վառարան , նա մարդկային կրից վայրագութիւն կը կրճատէ , կը հալէ և բարիին և վսեմին զգացումով զայն կը ձուլէ կ'ողորկէ . անտի կ'առնու յառաջդիմութիւն իւր անիւի առաջին գիշն . անտի կ'առնու քաղաքակրթութիւնն իւր ծրագիր խորհուրդ :

Չաւա՛կս , դպրոցական այդ գրասեղաններու վերայ ուսի՛ր ճանաչել քո անձն . ուսի՛ր քո պարտիք մարդկային . առողջապահ եղիր , մաքուր եղիր , ողջախոհ եղիր , խոր համակրութիւն ունեցիր քո ծնողաց վերայ . յարգէ քո դաստիարակն և դասատուն : Այն բոպէ , որ կը սահի արչաւով , քո կեանքի մի տարրն կը կաղմէ . ուսի՛ր զայն քո պէտքին գործածելու . դպրոցի , այդ ուսմանց բուրաստանի մէջ դու այն մեղու լե՛ր , որ ծաղկանց կոկոնի վերայ իւր մթերք և պաշար կը պատրաստէ : Մի հարկաւոր բան ևս ասեմ քեզ . դու դարաւոր վշտերու տակ ընկճուած մի ազգի զաւակ ես , այդ սրբազան յարկի տակ ուսի՛ր սիրել քո ազգն , սիրել Հայն և Հայաստան : Ուսար դու նորա դարաւոր կեանքն : Նա չէ խնդացել ց'այսօր . նա միշտ արտասուք է հոսել . սիրէ՛ նորա աղէտքն և արտասուք . նորա սիրոյ հուրն թող ծաւալի քո մեն մի երակաց մէջ . պաշտէ՛ զայն քո երազին մէջ , քո արթնութեան մէջ : Չանա՛ Մեծ լինելու , ԱՆՆՏԱՆ չապրելու :

Իսկ ես, երբ տեսնեմ զքեզ բարոյական այս ձիրքերով զարգարուած, պիտի զգամ թէ կատարուած են իմ իղձերն ամեն, և պիտի օրհնեմ զքեզ իմ շիրմաց խորէն:

Քո ճակատն համբուրելով,

Մնամ քո հայրն

\*\*\*



1 Յուն. 79

Իմ քաղցր մայր

Թէ կայ մի օր, յորում առաւել զարթի մարդկային փիլիսոփայութիւն, թռիչ առնու դէպ անցեալն, դէպ ընկերականութեան մթին խաւերն, անդ խորհրդածել մարդոց թշուառութեան դաղտնիք, նոցա կենսական վիճակ. շանթահարել չարն, բարձրացնել բարիին յաղթանակըն. թէ կայ օր, յորում զգացումներն առաւել վառ լինին, սիրտերն յուզուած, հոգիներն հեզ և խիղճերն խռոված, այս օրն է այն. ում անհամբեր կը մնայի գրիչ առնուլ սրտիս պատկերն քեզ նկարել:

Մայր իմ, իմ գոյութեան փոքրիկ արարիչ. քանի՜ հզօր էր այդ ձայն, որ տակաւ կը հնչէ իմ ականջին. քանի՜ օրհնեալ այդ շուրթ, որով դու ինձ սէր ներշնչեցիր. քանի՜ հեզ այդ հոգի, ում խառնել ջանայիր և իմն. դու, երկնքի փոխա-

նորդ, մինչ մանուկ էի, կը կայտուէի մեր պարտէզի մէջ, քո հրճուանքն մեծ ընելու, քո դորոջն պատկելու, կը վարժապետէիր պարզել իմ անձուկ և մատաղ մտքի առաջ անհունութիւնն, աստուածութիւն. իմ անզուսպ հետաքրքրութիւն գոհացնելու համար ցոյց կը տայիր ինձ դաւարն և մանուշակ. նոցա անտես պարտիզպանն բացատրելով, անուշաբոյր վարդի և մեխակի քնքոյշ թերթերու վերայ զԱստուած կ'ուսուցանէիր: Յայնժամ դու ինձ կառաջարկէիր օրհնել այդ Աստուած, որ ինձ կեանք տուած էր. և, ո՞ դիտէ, ինչ զգացմամբ լի, մի հառաչ կարձակէիր քո կուրծքի յատակէն:

Այլ ես չը կարէի յայնժամ հասկանալ քո բարձր վարդապետութիւն, և դեռ կը շարունակէի իմ հետաքրքրութեամբ քո սիրտ ձանձրացընել. դուցէ լռելեայն այդ արարչապետի դործոց դաղտնիքն քրքրելու:

Այժմ կը հասկնամ այդ ձայն. նա արդարութեան ձայնն էր. կը հասկնամ այդ սէր. նա այն զգացումն էր, զոր պիտի տածէի Աստուծոյ և իմ ծնողաց վերայ. կը հասկնամ այդ հոգի ազնիւ. նա Յիսուսի հոգին էր, որ կը թրթուար մարդասիրութեան խային առաջ:

Յաւէտ պիտի հետեւիմ այդ ձայնի, պիտի կրեմ այդ զգացումն սրտիս ի խոր. պիտի ծընրադրեմ այդ հոգիի առաջ որ անմեղութիւն կը քարոզէ, անմահութիւն կ'երանէ:

Այն չաւիղ, զոր բացին ուսմունք իմ մտաց առաջ, խաղաղաւէտ կեանք կը խոստանայ. պիտի սիրեմ յաւէտ: ուսմունքն, ոյք քո խրատներու իրականութիւն կ'ապացուցանեն. — այլ ցա-



ւով կ'ասեմ թէ, ինչպէս ամեն Ազգ. վարժարանաց, նոյնպէս և մեր վարժարանի մէջ կը պակսի տնտեսագիտութեան ամենահարկաւոր ուսումն, զոր դու շատ կը սիրէիր և յաճախ զայն կը բացատրէիր ինձ, խնայող և պարկեշտ լինելու — պիտի ջանամ արդիւնաւորել քո խրատներն, յառաջ վարել իմ քայլերն դէպ ուսմանց այս լուսաւոր շաւիղ, ոչք իմ կատարելութիւն պիտի երաշխաւորեն:

Եւ հուսկ ուրեմն այդ ձիւքերու կատարելութեանց ծայրէն քո անուն պիտի օրհնեմ, զի դու իմ մարմին և հոգի միանգամայն սնուցիր, ուստի և այժմէն որդիական երախտապարտ դուրովոյս հաւաստին նուիրելով քեզ, մնամ

Միշտ քո ամենախոնարհ

Դուստրն

\*\*\*

1 Յունիւ 1879

Իմ աղնիւ Դուստր

1878 ը իւր չարագոյժ աղէտներովն թուաւ, սահեցաւ անցեալի անյատակ անդունդի խոր, իւր ետե թողլով սոսկումն և արհաւիրք, մահ և փրկութիւն: Եւ 79 կը գայր ողջունել մարդկութիւնն:

Մինչ այս խորհուրդներով զգայուն, շուրջ բոլորած քո քորքն, և եղբարք, Նոր տարւոյ յա-

տուկ յորդորանքներս կը տայի նոցա զրդուանօք, քո թուղթն ընկալայ. մայրական անյագ ծարաւով կարդացի զայն. ինչ քաղցր նկարագիր անցեալի, որով դու կը յուզէիր իմ սիրտ. և մի պահ բիւր երջանիկ համարեցի զինքս մայր լինելու հոգւոյ փառասիրութեամբ գինովցած: Եւ սոյն զգացման բուռն եռանդէս մղուած գրիչ կ'առնում մի քանի խրատ յիշել. ուշիւ ունկն դիր ինձ:

Այն շաւիղ զոր բացած են քեզ ուսմունք, մի փառաւոր ապագայի նախագաւիթն է, նա արդ աղօտ նշոյլով է լուսաւորուած. յառաջ միջէ՛ք քո քայլն, և այդ նշոյլ քո աչք պիտի շլացնէ. կեանքի դուռներն պիտի բացուին քո առաջ. մըտիր ի ներքս այդ դուռներէ և բազմէ՛ հաճոյից խրախճանի մերձ. նա յանկուցիչ է. նա յոյժ քաղցր է:

Այլ սակաւք կը վայելեն զայն. զի օճապըտոյտ է այդ շաւիղ, նա իւր դարաններն ունի. իւր իժերն և կարիճներն ունի, ոչք մարդուն գալչապարէն չ'են հեռանար, և սակաւք են, ոչք կենաց այս փշուտ նախագաւթէն անվտանգ կը զերծին:

Աղջիկս, պարզեմ քեզ այդ դարան, այդ իժ և կարիճներ, զի դու չը զոհուիս այդ դարանի, այդ մարդակեր կենդանիներու:

Երկրի վերայ մեզկ և անհաստատ դաղափարներ, մոլորեալ զգացումներ, պատիր երեւոյթներ անարկու իժեր և կարիճներ են, ոչք հանապաղ կը տքնին մարդն այդ կորստեան դարանի մէջ քաշել, թշուառութեան գուբին մէջ թաղել. ուր նմա բաժին են արիւն և արտասուք, անէծք և մահ . . . :

Ուստի այդ խաղաղ գրասեղաններու վերայ ջանա ունենալ հզօր և հաստատուն գաղափարներ, վտարել այն մոլոր զգացմունք, ոյք գուցէ մի օր մերձին քո սրտին տիրապետել. խորն թափանձել այն խաբուսիկ երևոյթներու, ոյք հազար գոյներով կը գան աչք շլացնել: Խօհեմ և պարկեշտ եղիր, քաղաքավար և ուսեալ եղիր. հեղ եղիր, դիւրազգած եղիր: Երբ տեսնես դու ցնցոտիներով ծածկուած մի ծերուկ կամ մայր, արգահատէ նոցա վերայ. զի նոքա ևս մարդկութեան մի տարերքն կը կազմեն:

Հայրենասէր եղիր. երբ տեսնես դու բեռին տակ ընկճուած քրտնաթոր մի մարդ որ հայերէն կը խօսի, սիրէ նորա հայրենիքն, նորա վիշտերն. չե՞ս յիշեր, նա Հայկ, Արամայ թողնէ: Երբ Հայաստան անուն քո ականջին հնչէ, անզգայ մի լինիր, յոտն կաց և թող քո սիրտն արբոյիէ ազնիւ զգացմամբ, թող քո միտքն խռովի վեհ խորհուրդով:

Դու, աղջիկս, իմ հոգւոյն հատոր, չը լինիս այն աղջիկներու նման, ոյք գիտեն միայն իւրեանց հաճոյք երազել: Մհ, ասեմ, չը լինիս դու մի օր այն ընտանեաց նման, ոյք չ'ունին բնաւ Հայու գործ, Հայու զգացում. . . . :

Հուսկ ապա յարգէ յիշատակս և տուր ինձ քո ճակատն համբուրել խանդավառ զգացմամբ, որով

Մնամ քո մայրն

\* \* \*



Մեծապատիւ Տէր

Ոչ նուազ երջանիկ պիտի համարիմ զինքս, թէ նոր տարւոյ առթիւ, շլթայուած լեզուիս կապերն խղելով, կարենայի արտայայտել Ձեզ երախտագիտական սրտիս բուռն զգացումներն:

Ընկերական աշխարհի վերայ, թէ կայ մի սրդասաբեր սերմ, որ մարդկային անարատ սըրտերու անդաստանին մէջ թաղուելով աճի և ուռճանայ. թէ կայ մի այնքան հզօր մղում, որ յառաջդիմութեան անիւին թաւալումն աւելի ևս արագէ. թէ կայ մի փառք, որ մարդուն սիրտն վսեմ իղձերով պարարէ, և, անմահութեան թեւեր զգեցուցած, տանի զայն շրջել մինչև ապագայ սերնդոց սրտերու խորն, ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻԻՆՆ Է այն. ոյր վսեմ օրինակն ցոյց տուաւ թեզ Գողգոթայի նահատակն, և դարերու անհունութիւն չը պիտի կարէ նսեմացնել զայն բընաւին: Անմահ գրուած են կիւթէմպէրկ Գողգոթոս մարդկային սրտերու խոր, զի մին բանավատութեան զարգացման աստիճանաչափն հնարեց, և միւսն ծովերու անհունութիւն ճեղքեց և ազգերն ընդիրեար կապեց: Մեծագործութիւնն անմահութեան ճանապարհին սուրհանդակն է:

Մեծագործութիւնն, զոր ցուցիք յիս, մեծ է յոյժ. զի, որբ և անպաշտպան մի մանուկ էի, գթացիք յիս. հաց տուիք, լոյս տուիք, և իմ ճակտին թշուառութեան դատակնիքն սրբեցիք. և այսօր ուսումնարանի, այս սիրուն յարկի տակ կ'ուսանիմ պարտիք, ոյք անհրաժեշտ են. կ'ուս

սանիմ ուսմունք, որք մարդկային կատարելութիւն կը վաւերեն:

Քանի մարդասէր է, Տէր, այդ հոգի աղնիւ, որ, չը դիտեմ, որպիսի վսեմ զգացումէ թելադրեալ, չը վճատիր երբէք այնքան զոհողութեանց վերայ, զոր կ'ընէք հայրաբար ինձ համար.— անշուշտ, ինձ նման մի թշուառ և անտէրունջ մի մանուկ փրկելով, բարի և ընկերական մարդ կացուցանելու օրհնեալ փափաքն է այդ —: Եւ, արդարև, ինչ մեծ գործ քան մի կեանք փրկել և զայն ապագայի գիրկն նետել:

Ձեր հայրական գորովն մեծ խրախոյս է իմ յառաջդիմական ընթացքն արագելու, սուր խրթան է մեծ լինելու, Ձեր փառքն բազմապատկելու. նա այն ամպն է, որ երախտագիտական արտասուք կը ցօղէ սրտիս ջինջ տախտակին վերայ: Այն օրէն, յորմէ հետէ Ձեր հովանին յիս տարածեցիք, զիս երախտապարտ կացուցիք և իմ այս մատաղ շրթունքն օրհնեցին Ձեր անուն և կեանք և պիտի օրհնեն ց'որչափ սիրտս կենդանի զգացմամբ տրուիէ. այն ապագայ, յոր իմ քայլերն ուղղուած են, ձեզ կը պարտիմ. ձեզ, որ, խաւարի ճանկերէն զիս աղատելով, իւրյս աշխարհ բերիք: հաղար երանի՛ ուրեմն Ձեզ, որ մեծագործութեամբ Ձեր անուն անմահացուցիք:

Ի վերջոյ, որդիական գորովով Ձեր ձեռքն համբուրելով,

Մնամ Ձեր ամենախոնարհ ծառայն

\*\*\*

### Ազնուափայլ Տիկին

Անշուշտ ներողամիտ պիտի լինիք ինձ, երբ յանակընկալս սոյն նամակ կը գրեմ Ձեզ, որով գուցէ և Ձեր սիրտն յուզելու, Ձեր դէմքն տըլրեցնելու տխուրն առիթն ընծայեմ:

Երեկոյ էր, ժամն կէս կը հնչէր, փողոցներն մութ էին, զի երկին տխուր ամպերով սքօղած էր, լուսինն չէր լուսաւորէր երկիրն. մի խստաշունչ ցուրտ տիրած էր ամենուրեք. ձմեռ էր:

Մեր տան ամեն սենեակներն լուսաւորած էին. ընդունելութեան սրահն սովորականէն առաւել զարդարուած էր. մի փառաւոր և լուսազարդ ջահ նորա փայլն կը յաւելուր. ամեն ոք զուարթ էր, գուցէ հիւրերու գալստեան սպասումովս ոգևորուած: Յանկարծ դրան հնչակն քաշուեցաւ. մի աղքատ կնոջ գալուստն ինձ իմացուցին, անզգալապէս ծանրաքայլ նախագաւիթն իջայ զայն տեսնելու:

Մի ծակծկուած քուրջ նորա ցուրտէն քըստմնած մարմինն կը պատէր. դէմքն վտիտ էր, աչերն խորն անկած, մազերն թափթփած, կոշիկներն պատառուած. նա մի կիսամերկ զաւակ ունէր, որ ցուրտին և նոթութեան սաստկութեան չը կարենալով տոկալ, արդէն շատ լացած, կը հեկեկար մօրն սրունքներուն փարելով: Այս երկու թշուառներն Հայ էին:

Մայր էի, սիրտս յուզուեցաւ, գլուխս փոթորկուեցաւ. լալ կ'ուզէի, այլ, չը դիտեմ, է՛ր Հարաասուեցի: Խոր արգահատանք յայանելով

նոցա, մի սենեակ հրաւիրեցի. անդիւրեանց  
մերձ նստայ և վիշտ հարցի. հասկցայ թէ թըշ-  
ուառ էր նա բառին իմաստովն, և լացաւ:

Մի պահ խոր մտածմանց մէջ սուզեցայ, ուր  
հարցի իւրովի. ի՞նչ է աշխարհ, ի՞նչ են մարդեր.  
Ի՞նչ այս պալատն բարձրաչէն. ի՞նչ այս սրահն շը-  
քեղազարդ. ի՞նչ այս փառք, հարստութիւն, ոչք  
կրնան զիս ծայրայեղ իղձերու անհունութեան  
մէջ յածել: Ի՞նչ շահ, թէ գտնեմ զինքս այս  
փառաց բարձունքին մէջ յորացած. մինչ տես-  
նեմ ինձ նման մի կին, որ զիրկ հացէ և հան-  
գիստէ. նօթութեան անողոք խարազանէն հալա-  
ծական, կը թափառի միշտ կը թառի պալատանց  
դռներու առաջ մի պատառ հաց խնդրելու, իւր  
մարմին պահպանելու. . . . ի՞նչ շահ թէ, իմ գա-  
ւազունքն և բարեկամք շուրջ բոլորած այս շքեղ  
խրախճանի, հրճուիմ և բերկրիմ. մինչ իմ արե-  
նակից քոյր, անպաշտպան, գայ չալել իմ դուռն,  
մի պատառ չոր հաց խնդրելու. . . . Այո՛, յայն-  
ժամ միայն կատարեալ պիտի լինէր իմ հաճոյք և  
բերկրանք, երբ խոնարհէի այս թշուառուհւոյն  
վշտերու առաջ և բարձրացնէի զայն նոցա ծան-  
րութիւններէն, սեղանակից ընելով ինձ զայն. և  
այս էր իմ պարտն մարդկային, իմ պարտ ընկե-  
րական:

Ազնուասիրտ Տիկին. անշուշտ, թէ ձկտիմք  
այսօր ժողովրդային դասու խորն, պիտի գըտ-  
նեմք անհատներ, ընտանիքներ, ոչք մութի և  
ցուրտի մէջ նօթի կը ննջեն, ոչք վերայ հարկ էր  
ազնուական և կարօղ դասն իւր գթութեան ակ-  
նարկն ուղղել:

Սոյն սրտաճմիկ պատահարն, զիս ընդ եր-

կար յուղելէ յետոյ, ստիպեց այս նուազ մի հան-  
գանակութիւն կազմել աշակից ընտրելով զՉեղ,  
որ սրտակից էք ինձ. զի ահա կը գտնուիմք մի  
այնպիսի ժամանակի և օրերու մէջ. ուր ընտա-  
նեկան պէտքերն առաւել անհրաժեշտ են: Կազ-  
մել կ'առաջարկեմ մի հանգանակութիւն, ոյր հա-  
սոյթովն կարենամք բազմութիւ Հայ ընտանեաց  
վիշտն սակաւ ինչ ամոքել. դուք և ես միանգա-  
մայն կը ճանաչեմք շատ հարուստ ընտանիք, զորս  
կը յուսամ թէ պիտի կարենամք մեզ օժանդակ  
գրել:

Վերջապէս հարկ է որ ընեմք այս մասին զոր  
ինչ կարօղ եմք ընել. մեր ամենու պարտն այս է:

Յարգանօք կը բարևէ զՉեղ  
Չեր բարեկամուհին

\* \* \*



31 Օգոս. 79

Պարոնայք և Օրիորդք

Կը յիշէ՞ք, հինգ ամ յառաջ փոքրիկ պա-  
տանիներ էիք, երբ ուսման այս տաճարն մտաք,  
ուր ուսում կըթուլթիւն ուսանելու. — այո՛, կը  
յիշէք այդ երազային օր, յորում դուք, անփորձ,  
աշխարհին արկածներէ, խաղաղ, կեանքի տաղ-  
նապներէ, կ'ուսանէիք ուսումներ, ոչք գուցէ մի  
օր ձեր մենտորն յինէին. կենաց շաւղի առապա-  
րըն հարթելու: Այն օրէն հետէ մշակեցիք ձեր  
գաղափարներն, ճանաչեցիք բարին և չարն. փափ-

կացուցիք ձեր զգացումն . աշխուհացուցիք ձեր սիրտն և հոգի . ըմբռնեցիք գեղեցիկն և վսեմն : Այն օրէն կեանքի առաջին չրջան թեալոսեցիք , ուր յուզուեցաք , երևայակայեցիք , քննեցիք , խուզեցիք , դատեցիք :

Այլ այսօր կը պատրաստուիք թողուլ դպրոցըն որ երբեմն Ձեր երազոց բոյն և վառարան հանդիսացաւ . և մտնել կեանքի երկրորդ չրջանն ընկերական աշխարհն . յոր , երբ առաջին անդամ արև տեսաք , սահմանուած էիք մտնել :

Այլ , իմ սիրուն զաւկներ , կացէ՛ք , կացէ՛ք . ասպարէզն , յոր կը դիմէք , պարզեմ Ձեզ , նա փշուտ է . ձեր ոտքեր պիտի արիւնին . անդ վիշտ և աղէտ կան , արտասուք և մահ կան , ոյք , դըժոխային ուրուականներ : պիտի ժպրհին ձեր կենաց վարդի փափուկ թերթերն փետել . մի՛ երկնչիք , նոքա ամեն պիտի անցնին ընդ հարելով Ձեր ճակտի , և պիտի յաջորդեն խաղաղ և անվտանգ օրեր , ուր դուք կեանքն պիտի ճաշակէք անվրդով :

Պարոններ , այն ասպարէզի մէջ , յոր կը դիմէք , պարտքեր ունիք , անհատական պարտք , ազգային պարտք : Ձեր առաջին պարտն է սիրել մարդերն և դիտնալ նոցա հետ վարուիլ , որով ձեր անհատական շահերն ապահովել :

Մարդեր պիտի չարախօսեն զՁեզ , պիտի հալածեն , նեղեն , ի բանտ արկանեն . այլ դուք մի վհատիք կեանքէ , այլ սիրով տարէք նորա այս խաշակրութիւնքն : Սիրեցէ՛ք Ձեր ազգն , ոյք զաւակներ էք . սիրեցէ՛ք նորա շահերն , սիրեցէ՛ք դպրոցն , սիրեցէ՛ք ազգասն և թշուառն , սիրեցէ՛ք և պաշտեցէ՛ք արդարութիւն և ճշմարտու

թիւն , ում դուք կանուխ զինուոր գրուեցաք :

Օրիորդներ , նոյն բան կը կրկնեմ և ձեզ , այն ասպարէզի մէջ , յոր կը դիմէք , պարտքեր ունիք . — Ձեր առաջին պարտքն է ընտանիք վարել . նորա պարտիք ստանձնել — . կրկնեցի ձեզ յաճախ . ընտանեկան աղէտներն յոռի վարչութեան պատճառաւ . դուք լսեցիք այս ամեն , և ցաւեցաք և հառաչեցիք : Օհ , մի լինիք անկարեկիր այս աւերուած և անկած վիճակի վերայ . նա իւր փրկիչներն կ'սպասէ տասիններորդ դարու ներկայ սերունդէն : Պարկեշտ եղիք , զգայուն եղիք ազգի ցաւերու վերայ , և բաւ է :

Առ հասարակ իմ յետին բան ուղղեմ Ձեզ , ով իմ անոյշ որդիներ , իմ երազոց հեշտ առարկայք . միտ դի՛ք ինձ :

Այսօր կը խրկեմ զՁեզ ընկերական աշխարհըն , մարդկան ժխորի մէջ , իբր փափկասուն դառնուկներ , իբր լուսավառ ջահեր , երթալ անմեղութիւն քարոզել , ամեն անկիւն լոյս սփռել , հայրենեաց որդիներն կրթել . ընտանիքներն վերստին զարթել : Այն լոյս . զոր Ձեր մտքի մէջ դրի , թող չը խաւարի . այն հուր , զոր ի ձեզ արծարծեցի , թո՛ղ չը շիջանի բնաւ , ան զգացում՝ զոր ձեր փափուկ սրտի մէջ ղետեղեցի , չը մեռնի՛ բնաւ . այն աւիւն , այն աշխոյժ , զոր ազդեցի ձեզ , թո՛ղ չ'անհետի բնաւ : Մի մի աստղեր եղիք աշխարհի հրապարակի վերայ . դործեցէ՛ք անդ , զոր ինչ Ձեր կոչում կը պահանջէ . յառաջեցէ՛ք , մե՛ծ եղիք . վայ այն օրին , յոր դուք աննշանութեան մէջ թաղուիք :

Եւ մի մոռնաք դերեզմանի մէջ չորցած իմ ոսկերտիքն յիշել , իմ անուն և յիշատակ օրհ

ներլ, յորժամ իմ ճակատն արդէն պսակուած պիտի լինի: Գնայք բարեալ:

Տնօրէն վարժարանին

\* \* \*



1878 Դեկ. 31

Պարոն և Բարեկամ

Մոյն վարկենի առանձին եմ մի խարխուլ և փրփկած սենեկի մէջ, մի անշուք զրասեղանի և առկայծ կանդեղի առաջ, ուր ձեռն ի ծնոտ կը մտախոհեմ, որ ինչ միտքս կ'ալեկոծէ:

Ձմեռ է. երկին իւր խաղաղ կերպարանն ծածկած է սև և թխատիպ ամպերով. արևն գնացած է հակստեանայց աշխարհն այցելել, աստղեր չըկան. համայն երկրագունտ մի սպիտակ սաւանով է քողարկուած տխուր սրտիս հակառակ. մի բռնաշունչ հողմ յիրեար կը բախէ տանց պատուհաններուն երկաթեայ բեղկերն. սենեկիս ծակտիքներէն իներքս սպրդելով կը դայ սիրտս սըլաբել. սարսուռն պատած է մարմինս, ոտքերս կաշկանդուած են ցուրտէն, մատներս ընդարմացած:

Այն վարկենի մէջ, ուր ցուրտին հետ կը մրցելի, ճակատագրիս հետ կը կռուէի, մի քանի քայլ հեռի, իմ բնակած տան կից, մի հոյակապ և բարձրաչէն տան մէջ ցնծութեան և «կեցցէ» ներու ազաղակներ լսեցի. անշուշտ մի լուսաւառ ջահ կար անդ. սենեակներն պատասպարուած էին ցուրտէն, մի ջերմ խարոյկ կը տաք-

ցրնէր ամբողջ յարկն. անդ ձմեռ չը կար, ամեն ինչ կազմ էր. մի շքեղ խնջոյք պատրաստուած էր անդ: Այր, կին, զաւակ նորա շուրջ բոլորուած, կ'ուտէին, կ'ըմպէին, երգի գոռումով սրահն կը թնդացնէին. կեանքն կը վայելէին, նոր տարւոյ հանդէսն կը փառաւորէին: Սոքա Հայ էին:

Իսկ ես լուայ այս ձայն, այս ցնծութիւն և սիրտս յուզուեցաւ. հոգիս խռովեցաւ. մի պահ անիծեցի կեանքն, անիծեցի մարդերն, անիծեցի արդարութիւն. . . որ ի բարձանց իւր թևեր տարածած կը հռչակէ և կը ծաղրէ մարդկութիւնն:

Թողի գրիչս, առի հոգիս երթալ յածել ընկերականութեան այս անհաւասար դասի խոր. սպրդել Հայ պաշտանց հար պատերէ իներքս, ուր Եհովայն սեամին վերայ կ'սպասէ և կրից աստուածն իներքս բարձրագիւր կը յոխորտայ. ուր նաժիշտ և սպասաւորք երթևեկ կ'անեն. ուր առատութիւն սփռուած է լիօրէն . . .

Մինչ բազմութիւ Հայ ընտանիք կան, ոյք չ'ունին ամուսն, չ'ունին հանդերձ. չունին հաց և պանիր, չունին մի կարկանդակ իւրեանց որդւոց քաղցի խաբելու. այր, կին, զաւակ և աղջիկ խուցին մի մի անկիւնն մենացած, մին կը մոնչէ և կը դատապարտէ, մին կ'արտասուէ և կ'անիծէ, միւսն կըլայ և կը թախանձէ: Ընկերականութեան այս անեղ ուրուականներն դուցէ յաճախ մութի մէջ ընդ միշտ կ'անիծեն արևն, իւր գիշերային ծածկութիւն տակ յաւիտենապէս քողարկուելու. բողոք կը բռնան դէպ երկնից կամարն, յաւիտենութեան մէջ կղզիացեալ Ար-

դարու թիւնն ի դու թ շարժելու . . . :

Այլ, ի նչ կ'ասեմ, բողոքն և անէծք չը կարեն թշուառին քաղցն յագեցնել. նորա մարմին պատասպարել. քաւ, քաւ, աղքատութիւնն իւր մերկ թևերով կը չալէ նորա դուռն մի ժամ յառաջ իւր որսն որոգայթելու. նա կը պայքարի, կ'ընդդիմանայ այս լիրբ ճիւղին, հուսկ ապա ոգեսպառ կը թաւալի, զի ոտին իւր գոյութեան պայմանագիր հրովարտակն ունի ի բռնի, եւ մարդկութիւնն չը գթար :

Թշուառն երկար մաքառումէ յետոյ անկաւ, այլ կայ մի ձեռն, կայ մի արդարութիւն, որ նորա նեխած դիակն անտարբեր մարդկութեան երեսին պիտի նետէ. կայ մի շուրթ որ նորա ճակատին նախատինք պիտի թքնէ . . . :

Ազնիւ բարեկամ, կարի երկար եղաւ գիշերքն. մտքով անակէ պալատ, պալատէ անակ ել և էջ ըրի. և իմ հոգին խռովէր :

Վիճակն, յորում կը դրեմ Ձեզ այս աղետաբշտ տողեր, կարի դառնագոյն է ինձ համար. անհամար վիշտեր բոլորած են զիս, կրծել և ըստպառել, իբրու որդեր գերեզմանական մարմնոյ շուրջ. այլ պիտի ջանամ բարեկամ, երկարել իմ պայքարն նոցա դէմ, մինչև յաջողիմ այդ վիշտակ գլուխ ջախջախել և նորա գլխին վերև կեանքի դրօշն պարզել . . . :

Կը բարևէ զՁեզ ձեր վշտացեալ բարեկամն

\*\*\*



